## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 11

*30 ՆՈՅԵՄԲԵՐԻ 2021թվական*

## ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու հրավերով նիստին ներկա էին ավագանու 9 անդամներ:

Բացակա էին՝ Ֆրունզե Անտոնյանը, Ժիրայր Գաբոյանը, Արտաշես Դրմեյանը, Վոլոդյա Էլբակյանը, Արմեն Համիկյանը, Վալոդյա Հովհաննիսյանը

**Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝**

**Նիստը վարում էր համայնքի ղեկավարի տեղակալ՝ Սուրեն Աբրահամյանը**

**Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Լուսինե Մաթեվոսյանը**

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 30-Ի ԹԻՎ 11 ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՍՈՒՐԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2021 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 11 նիստի հետևյալ օրակարգը՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 147-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

2.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2021 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ կազմված սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին

3.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի մարզիկին դրամական աջակցություն տրամադրելու մասին

4.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի թվով 3 զոհված զինծառայողների ընտանիքների դրամական աջակցություն տրամադրելու մասին

5.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2021 թվականի հուլիսի 14-ի թիվ 46 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին

6.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի «Կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի հաշվետվությունը ի գիտություն ընդունելու մասին
7. «Եղեգան փող» պաշտոնաթերթի տպագրության համար Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային մասնաճյուղին գումար տրամադրելու մասին
8.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Բասեն բնակավայրի թվով 3 ընտանիքների դրամական փոխհատուցում տալու մասին

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 82/

Լսեցին
***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի ԹԻՎ 147-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՍՈՒՐԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 3-րդ կետերի,
34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ղեկավարի առաջարկը՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2020 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 147-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Որոշման 1-ին կետի 1-ին ենթակետում՝ եկամուտների գծով՝ «686896.8» թիվը փոխարինել « 725903.7» թվով,

2.Որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետում՝ ծախսերի գծով՝ «824393.4» թիվը փոխարինել « 863400.3» թվով:

3.«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 147-Ն որոշման թիվ 1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի 1-ի:
4.«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 147-Ն որոշման թիվ 2 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի 2-ի:
5.«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2021 թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 147-Ն որոշման թիվ 3 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի 3-ի:
6.«Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2021

թվականի բյուջեն հաստատելու մասին» թիվ 147-Ն որոշման թիվ 6 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի 6-ի:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 83/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 1 -Ի ԴՐՈՒԹՅԱՄԲ ԿԱԶՄՎԱԾ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՍՈՒՐԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետի դրույթներով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

Հաստատել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2021 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ կազմված սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 84/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԶԻԿԻՆ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՍՈՒՐԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ կետի, 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ դրույթներով, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2017 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ 20-Ն որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի 2-րդ մասով, հիմք ընդունելով Այգաբաց բնակավայրի վարչական ղեկավարի առաջարկությունը՝ մրցաշարի հետևանքով Դավիթ Զալյանի ձեռք բերած վնասվածքների բուժման համար աջակցություն տրամադրելու մասին՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2021 թվականի բյուջեի Բաժին 10 Խումբ 7 Դաս 1 «Կրթական, մշակութային և սպորտային նպաստներ բյուջեից» 4727 և 4729 հոդվածներին հատկացված գումարներից դրամական աջակցություն տրամադրել՝

1.Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի Այգաբաց գյուղի բնակիչ, Դավիթ Չալոյանին՝ 700 000 /յոթ հարյուր հազար/ դրամ՝ բռնցքամարտի աշխարհի առաջնության 2-րդ մրցանակային տեղը գրավելու համար և 300 000 /երեք հարյուր հազար/ դրամ՝ բուժման ծախսերը հոգալու համար:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 85/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԹՎՈՎ 3 ԳԵՐԵՎԱՐՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐԻ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՍՈՒՐԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ կետի,18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ դրույթներով՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2021 թվականի բյուջեի Բաժին 10 Խումբ 7 Դաս 1 «Այլ նպաստներ բյուջեից» ծրագրի 4729 հոդվածից թվով 3 գերեվարված զինծառայողների ընտանիքների տրամադրել դրամական աջակցություն՝ ընդամենը՝ 300 000 /երեք հարյուր հազար/ դրամ՝ համաձայն հավելված 1-ի:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 86/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 14_Ի ԹԻՎ 46 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՍՈՒՐԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ/***

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասի, 33-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 34-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի դրույթներով՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանու 2021 թվականի հուլիսի 14-ի «Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյանի համայնքապետարանի կողմից

«Դեպի անմահություն» փաստավավերագրական ֆիլմի նկարահանման և «Ախուրյան համայնքի անմահները» գրքույկի տպագրության համար գումար տրամադրելու մասին» թիվ 46 որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1.Որոշման վերնագրում և տեքստում «Ախուրյան համայնքի անմահները» և «Դեպի անմահություն» բառերը փոխարինել «Հավերժության ճանապարհին» բառերով:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 87/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ «ԱԽՈՒՐՅԱՆԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՏՆՕՐԵՆԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆԸ Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՀԵՆՐԻԿ ՄԱԶՄԱՆՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

Ընդունել ի գիտություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի «Ախուրյանի Կոմունալ սպասարկում և բարեկարգում» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենի հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 88/

Լսեցին

***«ԵՂԵԳԱՆ ՓՈՂ» ՊԱՏՍՈՒԱԾՔՆԵՐԻ ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻՆ ԳՈՒՄԱՐ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՍՈՒՐԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի գրողների միության Շիրակի մարզային մասնաճյուղի նախագահի 2021 թվականի հոկտեմբերի 28-ի գրությունը՝ դրամական աջակցություն տրամադրելու մասին՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է՝

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2021 թվականի բյուջեի պահուստային ֆոնդի պահուստային միջոցներ «Այլ նպաստներ բյուջեից»

ծրագրի 4729 հոդվածից «Եղեգան փող» պաշտոնաթերթի տպագրության համար Հայաստանի գրողների միության Շիրակի մասնաճյուղին տրամադրել 50000/հիսուն հազար/ դրամ:

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 89/

Լսեցին

***ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱԽՈՒՐՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԲԱՍԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԹՎՈՎ 3 ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ***

***/Զեկ. ՍՈՒՐԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ/***

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ կետի,18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ դրույթներով, հիմք ընդունելով Բասեն բնակավայրի 3 բնակիչների դիմումները՝ խմելու ջրագծի անցկացման հետևանքով իրենց ցորենի ցանքատարածություններին հասցված վնասի փոխատուցման մասին, համայնքապետարանի գյուղատնտեսության գծով մասնագետի եզրակացությունը՝
Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի ավագանին որոշում է.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Ախուրյան համայնքի 2021 թվականի բյուջեի Բաժին 10 Խումբ 7 Դաս 1 «Այլ նպաստներ բյուջեից» ծրագրի 4729 հոդվածից Ախուրյան համայնքի Բասեն բնակավայրի թվով 3 ընտանիքների տալ դրամական փոխհատուցում ընդամենը՝ 161200 / մեկ հարյուր վաթսունմեկ հազար երկու հարյուր/ դրամ՝

1. Հայրապետյան Վարդեն Խորենի - 67 600 /վաթսունյոթ հազար վեց հարյուր /դրամ
2. Դալլաքյան Աղասի Մերուժանի - 15 600 /տասնհինգ հազար վեց հարյուր/ դրամ
3. Գալստյան Կամո Բաբկենի - 78 000 /յոթանասունութ հազար/ դրամ

Կողմ-9 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 90/

Ավագանու անդամներ

ԳԵՎՈՐԳ ԲԱԲՈՒՋՅԱՆ

ԱՐՏԱՇԵՍ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԼԱԴԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ

ՏԻԳՐԱՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՄԱԹՈՍՅԱՆ

ՄՀԵՐ ՄՆԱՑՅԱՆ

ԱՐԱՄԱՅԻՍ ՄՔՈՅԱՆ

ԳԵՂԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ

*Համայնքի ղեկավարի փեղակալ*

ՍՈՒՐԵՆ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ________________

*Նիստն արձանագրեց*՝ Լուսինե Մաթևոսյանը